ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին են դիմել Ռուբեն, Գագիկ և Մարինե Հովհաննիսյանները Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով իրենց պատկանող 07-065-0297-0013 կադաստրային ծածկագրի 0,2136 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա փոխադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-302 դրական եզրակացությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է փոփոխել հողամասի նպատակային նշանակությունը և արտացոլել այն Քասախ գյուղի գլխավոր հատակագծում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Ռուբեն, Գագիկ և Մարինե Հովհաննիսյաններին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեում ենթադրում է 14248829 դրամ եկամուտների ավելացում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան